ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Շուշան Խաչատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության ստուգումների համակարգման, տեղեկատվական բազաների կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր վերահսկող

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Սլովենիայի Հանրապետություն (ք.Լյուբլյանա), 2024 թվականի հունիսի 9-14-ը

3. Հրավիրող կողմը.

Սլովենիայի Հանրապետության «Ֆինանսների նախարարության գերազանցության կենտրոն» (CEF)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Strengthening Auditors' Analytical Skills/Աուդիտորների վերլուծական հմտությունների ամրապնդում» թեմայով դասընթացին, աուդիտում վերլուծական կարողությունների, քննադատական մտածողության հմտությունների, արհեստական ինտելեկտի (AI) ինտեգրման հետագա զարգացման նպատակով:

5. Քննարկված թեմաները

- Աուդիտի տվյալների հավաքագրման և արհեստական ինտելեկտի (AI) ինտեգրման հմտություններ
- Աուդիտի տվյալների վերլուծության և արտացոլման հմտություններ
- Վերլուծական հմտությունների կիրառումը գործնականում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարության փորձագետների կողմից ներկայացվել են տեղեկատվության հավաքման, տվյալների վերլուծության մեթոդների, դրանց արդյունավետորեն կիրառման և արտացոլման մեթոդներին տիրապետման հմտությունները, քննադատական մտածողության, աուդիտորների անկախության և օբյեկտիվության բարձրացման ռազմավարությունները, ինչպես նաև աուդիտի առաջադրանքներում արհեստական ինտելեկտի (AI) ինտեգրման և կիրառման հմտությունները:

Դասընթացի ընթացքում փորձագետների կողմից ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք ստանալով պրակտիկ առաջադրանքներ՝ իրականացրել են քննարկումներ և առաջարկել լուծումներ՝ համապատասխան առաջադրանքը իրականացնելու համար: Ակտիվ մասնակցություն եմ ունեցել աշխատանքային խմբի քննարկումներին՝ ներկայացնելով առաջարկություններ առաջադրանքի կատարման համար:

Դասընթացի ավարտին փորձագետների և մասնակիցների միջև տեղի է ունեցել հարց ու պատասխան՝ դասընթացից ստացած արդյունքների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթեր չկան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

18.06.2024թ.